

«Դեպի վեր» մուլտֆիլմի պապիկի թղթե տարածական մոդելը



Միասին պատրաստենք «Դեպի վեր» մուլտֆիլմի հերոս պապիկի տարածական թղթե մոդելը:

Այն պատրաստելու համար անհրաժեշտ է ներբեռնել և տպել շաբլոնները, ապա հետևելով հրահանգներին՝ հերթականությամբ կտտարել դրանք:

Անհրաժեշտ են՝ գրասենյակային թուղթ կամ սովարաթուղթ, պրիստեր, մկրատ, սոսինձ:

Քայլերի հերթականությունը.

1. Ներբեռնեք և սովարաթղթի կամ գրասենյակային թղթի վրա տպեք շաբլոնները: Մկրատի օգնությամբ եզրագծերով կտրեք դրանք: Գծիկավոր գծերով հատվածները ծալքի գծեր են:

2. Վերցրեք պապիկի գլխի նկարը և գծիկավոր հատվածները ծալեք դեպի դուրս: Ա և Բ սոսնձման հատվածները սոսնձի օգնությամբ ամրացրեք մազերին, իսկ վզի վրա գտնվող Դ հատվածները՝ ականջների հատվածի հակառակ կողմին սոսնձեք:

Վերցրեք գլխի հակառակ կողմը, ծալեք բոլոր գծիկավոր հատվածները դեպի դուրս, բացի ամենաձախից: Այդ հատվածը ծալվում է դեպի ներս:

Սուսնի օգնությամբ ամրացրեք գլխի դիմային և հետևի հատվածները:

3. Համանման ձևով ծալեք և սուսնեք պարպիկի մարմինը:

Սուսնման եռանկյուն հատվածները, որտեղ չկա «ծալել» նշումը, պետք է կտրել մկրատով:

4. Կտրատում և ծալում ենք ձեռքերը և սուսնում համապատասխան հատվածները: Ձախ ձեռքի վրա՝ «Ը» նշումի մոտ առկա փոքրիկ գծիկի վրա պետք է մկրատի օգնությամբ կտրվածք անել:

5. Պապիկի քայլակը պատրաստելու համար անհրաժեշտ է շաբլոնը ծալել նշված հատվածում, սուսնել իրար: Այս քայլակի անիվների միացման կետում նշված հատվածում փոքրիկ կտրվածք անել և անիվները իրար հագցնել այդ կտրվածքների միջոցով:

6. Պատրաստի քայլակի պոչը հագցնում ենք ձախ ձեռքի վրա նախօրոք բացված անցքի մեջ:

7. Մնում է պապիկի արդեն պատրաստի մարմինը, գլուխն ու ձեռքերը սուսնի օգնությամբ միացնել իրար:

Շաբլոնները.


(նկարները մեծ չափով տպելու համար ակտիվացրեք դրանք)

Պապիկի գլուխը




© Disney PIXAR

Գլխի հետևի մասը



© Disney PIXAR

Պապիկի քայլակը




Պապիկի մարմինը



© Disney Pixar

Աջ ձեռքը



© Disney Pixar